

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ա.

Մամուկի տակ է և շուտով լուս կտեսնի այս ընդհանուր վերնագրով մեր մի աշխատությունը երկու մասից բաղկացած.

Ա. «Պտղավանքը և հայ եկեղեցիների գմբեթավորման խնդիրը»:

Բ. «Գերեզմանական կոթողները և նրանց արժեքը հայ արվեստի պատմության մեջ»:

Այստեղ երկու խոսքով կկամենայինք գաղափար տալ ավելի պարզ ձեմ տակ, առանց գիտական մանրամասնությունների քննադատական եղանակների, ծանոթությունների և աղբյուրների ցուցման։ Պըտղավանքը մեկն է մեր ճարտարապետության հնագույն մնացորդներից, որի ծագման մոտավոր ժամանակը Զ դարի առաջին կեսը պիտի համարել։ Նա երկարածիք եկեղեցի է, բազիլիկ եկեղեցիները հիշեցնող, բայց և գմբերի ակնենյատի մնացորդով, որ բազիլիկ շենքի առանձնահատուկ մասը չէ։ Ունինք հին բազիլիկ շենքեր առանց գմբեթի, ինչպես Մոփին է, Լալվարի Հյուսիսային կողմը, Քասախի Արագածի արևելյան փեշերին, Գնթունյաց Նախարարության մեջ կամ Երերուսլը, ինչպես և նման շենքեր կան Ասորիքում։

Այս շենքի վրա տեսնում ենք, թե ինչպես հայը յուրացնելով Միջագետքի և Ասորիքի բազիլիկան, նրա վրա դնում է գմբեթը և ուրույն ձեւու կերպարանք տալիս նրան։ Հայ ճարտարապետական ստեղծագործության ամենակարևոր երեւյթն է այս մեր արվեստի պատմության մեջ։ Ընդհանրապես արվեստն ու քաղաքակրթությունը ոչ մի ազգի մեջ բոլորովին անկախ չէ։ Հելլենական արվեստը ազդված է եգիպտականից և հեթիթականից, Ասորեստանինը՝ հեթիթներից, պարսիկներինը՝ Ասորեստանից։ Հայկականն էլ որոշ աղերս

ունի միջագետական—ասորական և սասանյան արվեստների հետ, որոնց մեջ հելլենական—հոռոմեական ազդեցությունը շատ ակներև է։ Ուրեմն ոչ մի ազգի մեջ բոլորովին անկախ, առանց արտաքին ազդեցության արվեստ չկա։ Խնդիրն այն է, թե այդ փոխազդեցությունը կամ փոխառությունը կույր, մեքենական է, առանց նոր ստեղծագործության թե ստացածը անցել է տվյալ ազգի հոգու պրիզմայով, նոր ձևակերպություն և կյանք ստացած։

Ընթերցողին շփոթությունից ազատ պահելու համար, պիտի հայտնենք, որ երկու մեծ հոսանքներ կողք կողքի նկատելի են հայ ճարտարապետական-քանդակագործական կամ զարդարական ոճերի մեջ Ե—Զ դարերում։ մեկը բազիլիկ կոչված, երկարածիք եկեղեցիների հոսանքն է, որոնց հետ կապված են նաև մեր ուսումնասիրության ենթարկված գերեզմանական կոթողները, մյուսը քառանկյունի պատերի վրա հաստատված գմբեթավորը, որ Զ—Է դարերում դառնում է իշխող և ազգային, ետ մշկելով բազիլիկ ոճը, Միջագետքի և Ասորիքի հելլենա-հոռոմեական ազդեցության հետ։

Պտղավանքը մեկն է այս երկու ոճերի միացման հնագույն եկեղեցիներից, որի ժամանակը որոշում ենք Զ դարի առաջին կեսը, շինված «Մոււեղ Ամատունեաց Տերք»-ի ձեռքով, համարելով նրան Մանգենի որդի, իսկ «Մանուեղ»-ի որդին «Մահակ ի Մանուեղեան» և սրա որդին Կոտիտ Ամատունյաց տեր, որ Մամակ Մամիկոնյանի և Ստեֆանոս Սյունիի հետ ապստամբեց Խոսրով Ապրուեզի դմբ մոտավորապես 590—600 թվականներին ըստ Սեբեսոսի։ «Մահակ ի Մանուեղեան» հիշվում է Գիրք

Թղթոցի մեջ և մեկն է Ներսես Բ-ի օրով՝
552 թվին Դուռայ ժողովին մասնակցող-
ներից:

Պտղավանքը իր երկարածիք երեվույ-
թով հյուսիսային պատի վրա ներսից ե-
րևացող որմայեցների հոնիական կիսա-
խոյակներով, լայնատերև ականթով հյու-
սիսային դրան շորջը, որ միայն գերեզ-
մանական կոթողների վրա է երեսում և
անհետանում հետագա դարերի շինությու-
ների վրա բացառությամբ Զվարթնոցի, որ
նույնիսկ շատ երևույթներ ունի զարդա-
քանդակների մեջ ասորա — հելլենականի
նմանությամբ, արմավեճի ծափ և տակը
կանգնած առյուծի դաշտանկարով, շուշա-
նածաղկով արեվմտյան լուսամուտի պսակի
մեջ, մատնանշում են ծագման հայրենիքը,
որ Միջագետքն ու Ասորիքն է: Արմավեճին
երեսում է նույնպես Քասախի բազիլիկայի
արևմտյան դռան վրա, Ծոփքի բազիլիկա-
յի որմայեցների կիսախոյակների վրա:
Ապա հյուսիսային պատի լուսամուտների
պայտաձեկվ պսակների զարդերը բոյորակ-
ների շարքով մեջները թոշոններ հիշեցնում
են Մարուկայի 586 թվի ավետարանի խո-
րանազարդերը, ինչպես եվ ավելի հնա-
գույններ Աղցի ստորերկրյա դամբարանի
դռան կամ կամարազարդը, կողեքերից կեն-
դանիների շարքով եվ ճակատին հավասա-
րակող խաչով: Այս բոլորը հայտարար են
ասորա — հելլենական աղերսի, բայց նաև
Սասանյանի: Միջանկալ ասենք, որ սա-
սանյան արվեստն էլ ունի ասորա — հելլե-
նական-հոռմետական շատ տարրեր, ինչպես
և հայոցը: Սասանյան աղերս են ցույց
տալիս դրսից, հարավային պատի լուսա-
մուտների պսակազարդերն ու քանդակները,
հատկապես նրանցից կենտրոնականի «Մա-
նուեղ Ամատոնիեց Տէրս-ի ծիավոր քան-
դակը եվ Հիսուսի մեղալիոնը, որ սավառ-
նող հրեշտակները բռնել են երկու կողմից,
ինչպես Տագ ի Բոստանի դրան ճակատին
սավառնող ոգիները: Նույնը նաեւ Օծունի
հարավային պատի վերին լուսամուտի
հրեշտակները:

Բայց այս բոլորի հետ ունինք և
գմբեթի մնացորդը, ակներեվ պացույց,
որ այս շենքը երկու հոսանքների միացման
մի երեւութ է, որպիսին և Գնիունեաց
Գրիգոր իշխանի եկեղեցին Մառայիշենում,
Քասախի ծախ ափին: Նույն տիպի ավելի
մեծ շենք է Արումի և Գրիգորը 668 թվի,

ուր հաղթահարված են ասորա-հելենական
հարդարանքները:

Պտղավանքի գոյության, որպես կարե-
վոր վանքերից մեկը, վկայություն ունինք
Գիրք Թղթոցի մեջ: «Իսրայել Պտղավանից»
վանահայրը մասնակից է Արքահամ կա-
թողիկոսին տված ձեռնարկին 606 թվին:
Այս և ուրիշ տվյալներով քան Ստրահով-
սկին և Թորամանյանը, հայ ճարտարա-
պետության աննման ուսումնասիրողները,
փորձում ենք ապացուցանել, թի Զ դարի
կեսերից եվ ավելի վաղ ունինք բազիլիկ
հեկեղեցների գմբեթավորման իրական մը-
նացորդներ Հայաստանի մեջ, եվ թի Պըտ-
ղավանքը, Օծունը եվ ուրիշները այդ միա-
վորման գործողության հուշարձաններ են:
Հինգերորդ դարի մեր գրականության մեջ
«գմբեթի, գմբեթեայ, գմբեթայարդ» արտա-
հայտությունները սովորական են, որ գոր-
ծադրված կարող են լինել միայն իրական
զաղափարի կամ երեվույթի գոյությամբ:

Հելլենական ազգեցությունը Միջագետ-
քի և Ասորիքի վրայով Հայաստանում
նոր չէր. Արտաշիսյան հարստության ներ-
կայացուցիչների դրամները, Արտաշեսի,
Տիգրան Մեծի, Արտավազդի ժամանակ,
անհերեքի ապացույց են քերում այդ իրո-
ղության: Արտավազդը ըստ Պլուտարքոսի
բանատեղծ էր եվ թատերազգիր հույն
լեզվով: Հելլենական արվեստի սիրողներ են
և Պարթևները, հետևաբար և հայ Ար-
շակունիները, հաճախ հոռմետական գերիշ-
խանության ենթակա:

Բ.

Քրիստոնեության ընդունելությամբ այդ
կապը առավել եվս պիտի շեշտվեր ոչ
միայն եկեղեցաշինության մեջ, ինչպես
տեսանք, այլ եվ քրիստոնեական պաշտա-
ման եվ հասկացողության հետ կապված
այլ երեվույթների մեջ, որոնցից մեկը հին
գերեզմանական կորողների գոյությունն է
նոր կրոնի պահանջների համեմատ: Սրանց
ուսումնասիրության է նվիրված աշխատու-
թյանս երկրորդ մասը:

Ազգերի քաղաքակրթությունը և արվես-
տի ծագումն ու ձևակերպությունը իրենց
զարգացման ընթացքում սերտ կապված են
իրենց կրոնի եվ հավատալիքների հետ:
Քրիստոնեական արվեստի նշանավոր պատ-
մաբան Kraus մի խոսք ունի, թի ազգերի
արվեստը գերեզմաններից է սկսվում. այս
շշմարիտ է ոչ միայն նախնական ազգերի

Համար, որոնց շինարարություններն ու ըստեղծագործական երկիվութները իրոք գերեզմանների հետ են կապված, այլև հետագա դարերի նոր հոսանքների ընդունելության ժամանակ, համապատասխան նոր արվեստի և մշակույթի ստեղծագործության ազբյուր է դառնում, հետզհետեւ հնից դեպի նորը փոխակերպվելով; Եթե եգիպտոսի արվեստն ու մշակույթը պատմության մեջ իրենց բազմատեսակ երելույթներով հոգու անմահության հետ կապված հասկացողության մարմարություն է, եթե հունական արվեստն ու կրականությունը իրենց բոլոր ճյուղերով կապված են եվ հասկանալի հույն ժողովրդի կրօնական ըմբռնումներով միայն, քրիստոնեական կոչված արվեստն էլ նոր վարդապետության հաստատության հետ, երեվան է բերում նոր ստեղծագործություն ազգերի մեջ, հնից հետզհետեւ դեպի նորագույնը և տարրեր զարգացումն ընթանալով: Կատակոմբաների արվեստը միշտն օղակն է հիմնուականի եվ քրիստոնեականի ծագման և զարգացման արևմուտքում: Կման երեվույթ նկատում ենք և հայոց մեջ:

Հայ արվեստի նախնական շրջանների հասկացողության համար մեծ նպաստ են բերում մեր երկրի այլ և այլ կողմերում ցըրված գերեզմանական կողովների մնացորդները, որոնք գենուս հարկավոր ուշադրության շեն արժանացել, Տարաբաղդարար նրանցից շատ քշերը ամբողջությամբ հասել են մեզ մեծագույն մասով եղծված, մասամբ կամ բոլորովին փշացած, կտոր կտոր եղած, բայց այնպիսի քանակությամբ, որ բավական են գաղափար կազմելու նրանց մասին: Դեռ ևս մենք լիովին նրանց գոյության եվ տարածման մասին ծանոթություն չունինք, բայց ինչ որ վերջին տասնյակ տարիներում պրոֆեսոր Մատին, Թորամանյանին եվ մեզ հաջողվել է ծանոթանալ եվ մի հավաքել, մի հույլ է, արժանի ընդարձակ և բազմակողմանի ուսումնասիրության:

Ինչպես ճարտարապետության նախնական շրջանի հասկացողության համար գիտական մեթոդ ենք ընտրել ծանոթից դեպի անծանոթը դառնալ, անթվական երելութները, եթե ոչ ճըշտությամբ մուտավոր ժամանակով որոշել, այստեղ ևս նույն եղանակին ենք հետևել: Պարզ ուսումնասիրությունները:

Եղուց է տալիս, որ նրանք չեն պատկանում հայ ճարտարապետության ծաղկման ոսկեդարի շրջանին, որ է դարն է: Այն պատկերագրությունը եվ զարդարանգակները, որ մենք տեսնում ենք այդ կոթողների վրա, տարրեր ոճ, ձևակերպություն եվ մոտիվներ ունին, քան մեր է դարի թվականով կամ ժամանակով հայտնի շնորհը: Նրանք չեն երկիվում նաև Բագրատունյաց կամ Ժդղարի վերածնության շրջաններում: Այսպ, ուրիմն, պատկանում են ավելի հնագույն դարերին, մի տարրեր գեղարվեստական հոսանքի, որ արդեն մեռնել է սկսում յոթներորդ դարում:

Եվ հիրավիք, նրանք ծագումով եվ տեղով ամենամեծ աղերս են ցուցաբերում մեր բազիլիկ եկեղեցիների ծագման, տեղի և ոճի նկատմամբ: Այս մի երելույթ է, որ ինքնին մատնանշում է նրանց հասկացողության ուղին եվ տեղը մեր արվեստի պատմության մեջ Մեղ հայտնի չէ, գրեթե, որեվէ նման գերեզմանական կոթող, որ կապված վինի տեղով բազիլիկ շնորհ հետ: Այստեղ ևս նկատում ենք զուտ հելլենականից միշագետական-ասորական եվ տեղական սասանյան արվեստների փոխազդեցությունը, ինչպես ճարտարապետության մեջ տեսանք:

Այս ներածական խոսքերից հետո տալիս ենք մեզ ծանոթ գերեզմանական կոթողների փաստագրությունն ու տեղագրությունը: Այդ վայրերը բազմաթիվ են Վանանդի կամ Կարսի, Տաշիրքի կամ Լոռվաշոցաններում, բայց առավելապես Արագածոտնին հարավային եվ արեվելյան փեշտիքին, նաև Դիլինում: Կրկնում ենք, որ նրանք գտնվում են, գրեթե, առանց բացառության այն վայրերում, որը բազիլիկ եկեղեցիներ կան, այսինքն նրանք ևս Դ—Զ դարերի երելույթներ են, որ հետո այլև շնորհ կրկնվում հետագա դարերում:

Այդպիսի կոթողներից նշանավորագույնն է Օձունի գերեզմանական կոթողը զույգ քառանկյունի սյուներով, որոնց արեվելյան եվ արեվմտյան երեսները ծածկված են պատկերաբանդակներով, իսկ կողերը զարդարանդակներով: Բուն կոթողները հաստաված են բազմաստիճան իլ. բարձր պատվանդանի վրա, կյուրոսի գերեզմանը հիշեցնող, պիլոնների վրա շինված պայտաձև կամարների տակ: Աստիճանների

վրա փորագրված են հավասարակող խաչեր բոլորակ պսակի մեջ առնված, ինչպես հատուկ՝ մեր և ասորական հին բազիլիկներին, Պատկերագանդակների մեջ տնօրինական տեսարաններ, ծնունդ, մկրտություն, նաև ննչեցյալների պատկերները սասանյան շրջանի զգեստներով, որ տեսնում ենք սասանյան և դարի դրամների վրա: Աւշադրության արժանի է մի խոզաղլուխ մարդու քանդակ, ինչպես և գմբեթավորված մի շենքի: Ենիվածքի քարերը կարմրավորվում են և նման Օձունի տաճարին, որ և դարի վերջերի ամենափառավոր շենքերից մեկն ենք համարում, ամենաուշը Զի ըսկիզբը: Այդ կոթողը միակն է այժմ այդ ձեռվ, բայց գտնված են նույն տեղում նըման կոթողի երկու գլուխները: Այս կոթողը իր պատկերագանդակներով այժմ Հայաւտանի համար սուստ է, շատ կարելոր նշանակությամբ նաև քրիստոնեական ընդհանուր արվեստի պատմության համար:

Զարմանալին այն է, որ նման ձեռվ միայն առանց կամարների տակ առնելու, կոթողներ ունինք և Անդիայում Ակկայի Խաչը և Ruthwell -ի և Bewcastle -ի արձանները, որ նկատել է Ստրչեգովսկին: Դրանք որոշ շափով նմանություններ են բերում և Բրդաձորի կոթողին, որ ավելի ուշ չեն քան Զ. դարը և շատ մոտիվներով նման սասանյան արվեստին:

Հոդվածի բնույթը և տեղի սղությունը շեն ներում մանրամասնություններ բերել սրանց և ուրիշ բազմաթիվ կոթողների վերին աստիճանի հետաքրքրական երեկույթների մասին, պատկերագրության կամ զարդագրության կողմից: Կծիշենք միայն ընդհանուր կերպով: Օձունի խոզագլուխ մարդու քանդակը կրկնված ենք տեսնում Թալինի, Ուշանի կոթողների վրա: Այդտեղ մենք տեսնում ենք նույն ավանդությունը, ինչ որ Ագաթանգեղոսի պատմության մեջ Տրդատի խոզ դառնալու ավանդությունն է, այսինքն Դ—Ե. դարից: Պտղավանքի Հյուսիսային դռան ականթները, շուշանածաղիկը Պտղավանքի և Օձունի կոթողի, կրկնված ենք տեսնում և Արագածի Ղարաշալարի կոթողի վրա պսակի մեջ առնված հավասարակող խաչերը, Հիսուսի և Աստվածածնի պատկերագանդակները պսակված հրեշտակների ձեռքով, եթե մի կողմից նմանություն են բերում Օձունի կամ Պտղավանքի նման երեսութներին, մյուս կողմից դրանք նման են ասորա-հելենա-

կան—սասանյան արվեստին, ինչպես և կոպտականին:

Ասորիքի Ե—Զ դարերի արվեստի աղերսը կոպտականի հետ մատնանշված է Ստրիգովսկիի (Die Koptische Kunst) մեծ աշխատության մեջ, նաեւ ուրիշների կողմից հայ և կոպտական արվեստների աղերսը կարող է միջնորդաբար և անմիջական իրնել իրեւ զավանությամբ իրար մոտ եկեղեցների, սկսած Դ և Ե դարերից: Այդ երեվում է հայ մանրանկարչության Ժ դարի ձեռագիրների կամարների կամ խորանների մեջ, որոնք արտադրված են ավելի հին օրինակներից: Քրիստոսաբանական ուղղության մեջ հայերը հետեւող են Աղեքսանդրիայի դպրոցի աստվածաբանության Եփսոսի ժողովից առաջ և հետո, մանավանդ Զ դարում: Քրիստոսի անվան փակագիրը (Mogram Christi) խաչի հորիզոնական թեմի վրա դեմ առ դեմ երկու աղավանիներով, տեսնում ենք Ե դարի հայ քանդակագործության մեջ, ինչպես էջմիածնի Հյուսիսային պատին կամ Աղջի ստորերկրյա դամբարանում: Թալինի մի կոթողի վրա թոշոնը կտցին պսակ դնում է Հիսուսի գլխին, որի դեմ բողոքում է Վրդանես քերթողը՝ Զ դարի վերջերի և Ե-ի սկզբում ապրող մի մատենագիր, երեւութը նեստորական համարելով և դեմ Քրիստոսի մարդեղության գաղափարին: Նման երեվութ, այսինքն թոշոն կտցին պսակ քունած, տեսնում ենք և կոպտական քանդակների մեջ:

Ապարանում, Արագածի արևելյան կողմը, Քասախի աշ կողմը, Ափնա գյուղում երկու բազիլիկ եկեղեցիների մոտ ունինք և մի խոյակ, հար և նման Խոսրով Բ-ի կոփել տված Տագի թուստանի խոյակներին՝ Անահատի քանդակով, մեղանում աստվածուհու փոխարեն հավասարակող խաչ, որ Քրիստոս է նշանակում: Տագի թուստանի մեջ թեվավոր ոգիները սավանելով պսակ են դնում արքայի գլխին, մեղանում թեվավոր Հրեշտակը կամ թոշոնը (Հոգին) կտցին պսակ, դնում է Քրիստոսի գլխին, մկրտության ժամանակ, ինչպես տեսանք, կամ Աստվածածնի գլխին: Մեր կոթողների վրա բազմաթիվ զարդաքանդակներ ունինք, որոնք երեվում են և սասանյան արվեստի մեջ, ինչպես Բրդաձորի կոթողի պատվանդանը, Խոփոնի բեկորները հին շենքի ևն:

Աստվածածնի պատկերագրության պես պես ձևերն ունինք գերեզմանական կոթողների և նրանց պատվանդանների վրա, կանգնած կամ նստած աթոռի վրա, Հետուուս գրկին, որոնք բյուզանդական օդի գիտրիայի տիպի պատկերների ծագման հայրենիքն են մատնանշում, Ասորիք, Եղիպտոս, կավելացնենք, գուցեց և Հայաստան, ուր միաժամանակ նույն հոսանքն է նկատվում: Ըստ երկու մեծ գիտնական, Կոնդակով եղ Լիխաչնվ, Հատկապես Կոնդակով, օգիգիտրիայի նախատիպը արեվելից են եկած Համարում, Ասորիքից կամ Եգիպտոսից, որ ապա Բյուզանդիայի վերայով Բատալիա է անցնում, Նախավերածնության (Vorrenaissance) և Վերածնության (Renaissance) շրջանների մադունաների զարգացման զարկ տալիս: Ինչ որ ուսու գիտնականները կամելով են Հայտնում օգիգիտրիայի նախահայրենիքի մասին, Հայ Հնագույն արվեստի մնացորդները ապացուցանում են իրական փաստերով: Թալինում աթոռի վրա նստած մի Աստվածածին ունինք Հիսուս գրկին, երկու կողմից մի մի հրեշտակ իրենց թիվերի միացումով Հովանի կազմած Աստվածածնի եղ մանկան գլխին, իսկ ձեռքերով բռնել են պատկերը, նման Եգիպտոսում Թերայի Աստվածածին: Նույն մոտիվը կա նահկ կոպտական գործվածքների մեջ: Աստվածածնի կանգնած պատկերը Հիսուս գրկին, ունինք Մահմուդուղում յոթերորդ դարից առաջ: Աստվածածնի մի այլ տիպի քանդակ գտնվում է Լոռիւ շրջանի Խովհատ գյուղի Եկեղեցու ափսիդի պատի մեջ՝ դըրած, ձախին մանուկ Հիսուսը, իսկ աջը վեր բարձրացրած ափը դեպի նայողը, որ պաշտաման նշան է. Նույնը տեսնում ենք կոպտական արվեստի գերեզմանական քանդակների մեջ: Ուշանի մոտ Խարաբավանքից Էջմիածին բերված կոթողի վրա Աստվածածնի քանդակը կա, Հիսուս գըրկին, իսկ գլխի վերելքը ճառագայթածել մի Հովանի (Muschelbaldachin), որ կրկնվում է նաեւ կոպտական արվեստի մեջ: Չենք ուզում ավելի երկարել այս մասին:

Մեր կոթողների վրա ունինք և Արահամի գոհարերության քանդակը Կողը (ափոր)ում Զորագետին կից և Արագածի արեվմտյան փեշերին Ազիամանում, նույն պատկերագրության /ամենահին երեվույթներից մեկը, որոց մասով նման Մելքիսեդէ-

գոհարերության Ռավիննայում: Կողը քանդակների բեկորները փորագրված եղ ձեղակերպված են հելլենական ակնայտնի նշաններով եղ նրբությամբ, եղ նրանք ավելի վաղ են, քան ջդարի վերջերը, երբ վրացիք խապար բաժանվեցան հայերից, որից հետո հնարավոր չէր, որ հայերենն ու վրացերենը միաժամանակ արձանագրության կամ եկեղեցական լեզու լիներ, ինչպես էր այդ շրջանում մինչեվ բաժանումը, որ երեկում է այդ նույն եկեղեցու բեկորների վրա: Մեր խոսքը չի վերաբերում Ժդարի վրացիք լեզվով արձանագրություններն, երբ հայերն ու վրացիք զաշնակից էին իրար բաղաբական հիմունքներով: Այս բեկորները երեվան են Հանված միայն պատահական կերպով, պեղումներ չեն. արված գեռ եկաւ: Դուք տեսեք, որքան աղնիվ են եղ քանդակները, իսկ խոյակները բյուզանդականի նախընթացները կարող են լինել:

Զեակերպության տեսակետով էլ մեր կոթողները որոշ շափով աղերս են ցուց տալիս Միջագետքի և Անդր-Հորդանանի կամ Հյուախսային Արաբիայի գերեզմանական համապատասխան արձանների հետ (Stele): Բաղաբատի թանգարանի սասանյան բաժնում տեսել ենք մերինների նըման մի արձան, շատ եղծված վիճակում: Հելլենա-Հոռմեական մի կոթող գիտենք նարաթացվոց երկրում, որի Պետրա մայրաքաղաքի ավերակները հելլենա-Հոռմեական արվեստի շատ մնացորդներ ունին: Մի քառանկյունի արձանի վրա հոմա-Հոռմեական ոճով պատկանակած է Հետիտեան կայծակի աստվածը Հատատ, իսկ մյուս կողմը Տյուփին՝ Հաղթության, արտաքին ձեկով նման մեր քառանկյունի կոթողներին: Նման երեվույթ ունինք եղ ավելի վաղ ժամանակներից Քրիստոսից յոթ դար առաջ Հագամի Քալմ (Calm von Haggat) աստծու քանդակը, Ասորեստանյայց զգեստավորությամբ եղ տակը քրմապետը, որ կանգնել է այս արձանը: Հավանական է, որ այս ձեկը անցած լինի հետիւններից Միջագետքի կամ Ասորեստանի վրայով գեպի Հյուախսային Արաբիա:

Ահա ինչպիսի ծանրակշիռ խնդիր է շոշափված այս աշխատության մեջ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
((Հայաստանեայց Եկեղեցից))